

ՊԱՐՄԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

REVUE Փրանսիական հանդէսը վերջին գիմն էր եւրոպացի բոլոր ականաւոր գրագէտներին, փիլիսոփաներին, դիտականներին իմանալու համար նրանց կարծիքը հայրենիքի և համամարդկային սիրոյ մասին: Հանդիսի նորատակն է այս գիմումով պարզիլ, թէ նաարաւոր է արգեօք հաշտեցնել այդ երկու հասկացողութիւնները՝ որոնք ներկայացնում են լրմբական եւը և ալտրուկզմը: Դրուած հարցի առաջնակարգ նշանակութիւնն աշքի առաջ ունենալով, մանաւանդայժմ, երբ հնի ու նորի կատաղի ընդհարումը մի անցողական չքջանի կանխանշան է կ'ասես, ժամանակակից մտքի բոլոր նշանաւոր՝ ներկայացուցիչները պատասխանել են *Revue*-ի հարցին աւելի կամ պակաս երկար խորհրդածութիւններով, որոնք և հըքատարակուեցին նոյն հանդիսի այս առուայ առաջին երեք համարներում: Անկարող մինելով թարգմանարար մէջ քերել այս բոլորը՝ մենք կը բատականանենք միայն եղբակացութիւններով, որ մի հակիրճ ամփոփումն է արտայայտած կարծիքների և մտքերի:

«Խնչպէս մեծամասնութիւնը գրականագէտների և գիտունների, ասում է *Revue*-ն, նոյնպէս և մեծամասնութիւնը գործի մարդկանց, քաղաքագէտ և հրապարակախոս, կարծում են, որ չայրենիքը և Մարդկութիւնը հնարքաւոր է հաշտեցնել Ցիշնք այս առթիւ Պոլ Դեշանելի, դը-Ֆինի, Դեռաւընել դը-Կոնստանի, Ռիբէն Դոհիէ, Ֆոււյոի, Լոկրուայի, Պուանկարէի կ արծիքները:

Միայն մի քանի անջատ ձայներ

նոցիոնալիստների՝ ինչպէս Պոլ Դերուեդ, էդմանդ Լըպլասիէ, գնացէ և պահպանողական Դընի Դաշնի, որոնք պնդում են, թէ հայրենասիրութիւնը և համամարդկային եղբայրութիւնը անհաշտ գաղափարներ են: Սակայն նացիոնալիստների խստասիրու կատարութիւնն ապացուցանում է, որ նըրանք բռնադատում են իրանց սեփական զդացմոնները, որովհետեւ կարծում են. թէ համամարդկային զաղափարների տարածումը կարող է թուլացնել ազգային ինքնապահպանութեան ընտպը ամբոխի պարզամիտ զլուխներում: Երդ՝ ճշմարտութիւնը բանալու այս երկիվը այժմ թւում է միանգամայն անօգուտ: Ժողովուրդն այժմ չափահաս է արդէն, այլև չի կարելի նրան առաջնորդել անվիճելի զողմաներով, այլ նրան հետաքրքրող հարցերի արդար և կատարեալ քըննապատութիւնով: Ծածկել ժողովուրդից համամարդկային սիրոյ իգէալը՝ այսինքն ճշմարտութեան մի մասը՝ նրա շովինիզմը վառ պահելու համար որեւէ պատերազմի հաւանականութեան առաջ, այդ կը նշանակի նրան համարել երեխայ:

Եւ արդէն օտարերկրացի հոչակաւոր մտածողները, որոնք մեզ կարծիքներ են ուղարկել, բնաւ չեն բաժանում մեր երկրի մի քանի պետական գործիչների և գրողների անվիճատահութիւնը գէպի մեր հարեւան պղկերը: Թէսոյոր Մոմդէնի վերապահումը վկայում է միայն, թէ որքան նուազ է նրանում մարդկասիրական հակումները: Բայց մեծ պատմաբանը պատկանում է անցած սերունդին, նրա հակառակ՝

լրդ Աւերիքին, Անրիկո Գերբին, գը Գուրենատիս, Կոշուտ, Լամբրեխտ, Լոմբրոզո, Նիվնինով, Մաքս Նորդառ և Նովիկով վկայում են, որ մարդկութեան սէրը կարող է միայն ամրացնել հայրենասիրութիւնը՝ գտելով այդ զայցմունքը: Այս համերաշխութիւնը ամենալաւ նշանն է ազգերի փոխարձ արդարութեան գաղափարի յառաջադիմութեանը:

Անա ճշմարտութիւնն ըստ մեր կատարած քննութեան, թէ բաղաքակիրթաշխարհում ինչ վիճակում են գտնըւում հայրենիքի և Մարդկութեան յարաբերութիւնները: Մեր ժամանակի համարեա բոլոր բարձր մաքերը յայտնում են, որ ազգերի մէջ եղբայրութիւնը անհրաժեշտ է նոյնիսկ այդ ազգերից իրաքանչիւրի բարիքի համար:

Անշուշա՞ բռնութեան գեւը նրանց սրակից գեւ դուրս վանուած չէ: Գուցէ իրանց գժբախտութիւնից ազգերը իրար գէմ դուրս զան անհիմ ոտնձըգութիւններով: Այս հրէշաւոր հաւանականութիւնը շի կարող նուազեցնել միջազգային պարտքը: Պէտք է ասել և կրկնել հասարակութեանը. թողէք օտար ազգերի գէմ տածած ձեր ատելլութիւնը, փնտրեցէք նշան, որ ձեզ բաժանում է նրանցից, այլ այն, ինչ մօտենում է ձեռի: Եւ եթէ նրանցից մէկը վաղը ձեռ վրայ յարձակուի, ողբացէք նրա կորութիւնը և պաշտպանցէք ձեր երկիրը հերոսաբար: Բայց երբ կը յաղթանակէք, վերսկսեցէք եռանդագին պատրաստել օդակար և ազնիւ եղբայրութիւնը:

Այս ազնիւ սկզբունքները կարնդ են, արդեօք մազի շափ անզամ նուազեցնել հայրենասիրների զայցմունքը: Անշուշա՞ նշանող ճշմարտութիւնը... ժամանակակից ազգերը իրաւոնք ունին իրանց բախտակարութեան համար այդ ճշմարտութիւն իմանալ:

Բարեկամական համերաշխութիւնը ուրեմն ընդհանուր ցանկութիւն է այն բոլոր հեղինակների և պետական զործիչների, որոնց մենք դիմունք: Նը-

րանցից մի քանիսը՝ ինչպէս ձարձ թիէ, Մորիս Բովոր, Անատոլ Փրանս, Ուրբէն Դոհիէ, Նախագահ Մանօ, Գուրենիէ, Նարէ, Լոմբրոզո, Նովիկով, Վանդերվիլը երազում են եւրոպական ֆեղերացիա:

Ազգեօք սա մի խմբերա է: Ո՛չ, գուցէ և ի իմերա չէ: Ցրամարանօրէն դատելով՝ կարելի է կարծել, որ այս ֆեղերացիան կիրազրուուի, երբ բոլոր քաղաքակիրթ ազգերը հաշտեցնեն հայրենիքի և Մարդկութեան ոէքը: Այս երկու զաղափարների մերձացման հետ միաժամանակ ազգերը կամաց-կամաց կը թողնեն իրանց եսական փառախրութիւնները: Նրանք կը զերպասեն միջազգային արդարագատութիւնը, որ այսօր հոգիւ սկըսուած է, և որը նրանք կը զնեն հաստատ հողի վրայ: Նրանք կը բացմացնեն գանձագերը միջնորդ զատարանների մասին, որոնց մէջ զոյտթիւն շն ունենայ փարզսկցիութեամբ ծիծաղիկի այն յօղուածները, ուր խօսւում է ազգային պատվի վիրատրանքի մասին ներկայ դաշնագերում: Միթէ երբեկից իսկական պատիւը կարող է զուր մնալ արդարագատութիւնից:

Ազգերը անմիտ պատերազմներով իրանց վէճերը լուծելուց կը հրաժարուեն վերջանականապէս:

Դիսկլ, Միքրո, Էլիկ Ռեկլիս, Մետերլինկ ցանկութիւններ են յայտնում, որոնք անցնում են նոյնիսկ եւրոպական ազգերի գանձակցութիւնից: Նրանք ցանկանում են ազգերի կատարեալ միացումը և սահմանների արմատական ջնջումը: Թէի շատ քիչ ձայներ են բարձրանում այսպիսի իգէալ պաշտպաններու համար, անհիմն չէ մտածել սակայն, որ նա կիրականանայ մի օր, երբ եւրոպական դաշնակցութիւնը և առնարի ազատութիւնը կատարեալ կը լինի:

Ներկայումս, երբ այնքան մեծ է փոխարձ անվստահութիւնը, իրաքանչիր ազգ ձգտում է փակումի իւսահմաններում և աշխատում է ի հար-

կին ուրիշներից բնապ առևտրական կախումն չունենալ, նա շրջապատում է իրան մաքսային պատերով՝ պաշտպանելու համար իր այն արդինազարծութիւնները, որոնք իր երկրում չեն կարող գարզանալ առանց այդ արուեստական միջոցի:

Միենանը չվ լինի մի գաշնակցութեան մէջ, ուր կ'իշխի փոխազարձ գատահութիւնը: Ամեն մի աղդ կարող է նույիրել իր ոյժերը այնպիսի արդինարերութեան, որ համապատասխանում է իր երկրի բնութեանը, և մաքսային արդիւքները կը կորցնեն իրանց խորհուրդը: Անրերի դաւառների բնակիչները կը զնան աւելի հարուստ երկրները, և այս զաղթականութիւնները կը ջնջեն սահմանների ներկայ կարեռութիւնը:

Ճատ հաւանական է ինչպէս այդ նախազուշակում է Դարրիէլ Տարքը, որ այդ ժամանակաշրջանում, նմանուելու օրէնքի կիրառութեամբ, զանազան քաղաքաբակերթ երկրների վարչական հաստատութիւնները բնաւ չեն տարրերուի իրարից: Փորձը ցոյց կը տայ ամենքին, թէ որոնք են լաւագոյնները:

Եւ առ կը լինի վերջարանը հետեւալ երեք էտապներին—համերաշխութիւն ներուպայի զանազան ազգերի մէջ, զանակցութիւն և յետոյ ձուլումը իրար հետո: Զանազան հեղինակներից, որոնց կարծէին դիմեցնենք, մի քանիւր խօսեցին տառաջին էտապից, ուրիշները երկուրդից և երրորդից: Ճատ հաւանական է, որ այս տարրեր պատասխանների մէջ հակասութիւն չկայ և որ միայն նրանց ցանկութիւնների իրազրուումուու ժամանակը աւելի կամ պակաս հեռու:

Սյսպէս թէ այնպէս Հայրենիքի և Մարգկութեան հաշտութիւնը ընդհանը-րապէս հնարաւոր է միջազգային եղբայրութեան և համաձայնութեան մէջ, թէ Կիւլո, Միքրո, Մետերլինկ, Էլիզէ Բնկիս կարծես ուզում են պնդել, որ ազգերի ձուլուելը տուած կը բերի հայրենասիրութեան ջնջումը:

Իրաւացի՞ են նրանք արդեօք: Կասկածում ենք: Տարդի հետ կարելի է կարծել, որ հայրենասիրութիւնը կը մնայ և այն ժամանակ, երբ քաղաքակերթ ազգերի վարչական հաստատութիւնները կը միանան:

Ի՞նչ բնաւորութիւն կ'ունենայ այն ժամանակ հայրենասիրութիւնը. անշուշտ նա բռնի տիրապետութեան որևէ ցանկութիւն չի պարունակի, նա չկ պարփակուի որևէ սահմանով, նա չկ պաշտպանի որևէ առևտրական կամ ֆինանսական շահ, որովհետև առանձին ընկերակցութիւններ կը կազմուեն այդպիսի շահների համար: Մի խօսքով նա կը լինի այն, ինչ որ է այժմեան հայրենասիրութեան ներքինը, այսինքն գեղեցկութիւնն ու ճշշմարտութիւնը ըմբռնելու մի առանձին եղանակ:

Գարձեալ Քրանոիացիներ կը լինին աշխարհում, բայց նրանք անհրաժեշտապէս համախմբուած չեն լինի որոշ ծովերի, գետերի և լեռների մէջ, Քրանոիացի կը մնան բոլոր նրանք, որոնք կը սիրեն միաժամանակ Գեկարտին, Կորնելին, Նիկոլա Պուտունին, նրանք, որոնք կը հաւատան բարոյական ազատութեանը: Գերմանացի կը մնան բոլոր նրանք, որոնք հաւասարապէս կը պաշտեն Լայրնիցներին, Կանաներին, Հեղելներին, Գետեներին, Բեթհովեններին, ինչպէս և նրանք, որոնք ունին սիստեմատիկ խելք, սիրում են կանխատեսել և խորապէս կապուել հավիր նշամարելի ճակատագրական երևոյթներին: Անգլիացիներ կը լինին աշխարհի ամեն ծայրերում, որոնք կը պաշտեն Շեքսպիր, Լոկիլ և Բևնթամ, բոլոր օվապաշտաները. որոնք կը տեսնեն մարդկային հոգում մի պարզ ցանց հաճելի և անհաճոյ զգացողութիւնների, և որոնք կ'աշխատեն արժանավայել կեանքով ձեռք բերել վայելքի ամենամեծ բաժինը: Կը լինին իտալացիներ—Պանտէի և Միքէլ Անջելոսի սաանդուն երկպագուները, կը լինին ուստաներ իրաւուցոյով և այլն:

Հայրենասիրութիւնն ուրեմն վարշականօրէն միացած Մարդկութեան մէջ կը լինի ազգերի փիլիսոփայական և բարոյսական հոգու մի մեացորդը: Այդ էլ մի ընկերակցութիւն է, բայց հոգոր և ազատ ամեն մի նկատական սահմանումները, մի տեսակ աշխարհական գաւառնութիւնն: Որդ՝ այս բոլոր գաւառնութիւնները, ինչպէս այսօրուայ փիլիսոփայական բոլոր բարձր սիստեմները՝ կը միանան համամարդկային սիրոյ մէջ:

Ես կարծում եմ նոյնպէս, որ այս հոգերը հայրենասիրութեան հետ միաժամանակ զոյսութիւն կ'ունենայ նաև մի ուրիշը, շատ զօրեղ, շատ քաղցր, այն զգացմանքը, որ կապում է իրար մեր միենայն հոգում կամ միենայն լեռնալանջի վրայ ծնուած մարդկանց: Դաւառայնն եղրայրակցութիւնը, ոչ այնքան ընդպրածակ, որքան ժամանակակից ազգութիւնները, բայց սահմանափակուած այն վայրերում, ուր սահել են մանկութեան և երիտասարդութեան օրերը, այն դիմիթից քնչութիւնը, որ զարթեցնում է մեր հոգում հայրենի հորիզոնի, ճանապարհների, տան տեսքը, անշուշտ երբէք չի չնչուի: Բայց նզ չզիտէ, որ ծննդավայրի այս սէրը չի ժխտում բոլոր ուրիշ մարդկանց օջաղների երկիւուած յարգանքը:

Եւ այսպէս՝ իր հնաւատը կամ մօտաւոր էվալիցիայի որևէ տատիճանում կարելի չէ հայրենասիրութիւնը նկատել որպէս ներհակ զգացմոնք համամարդկային սիրուն: Ամելին կ'ասենք: այն ժամանակ աւելի քան երբէք նա իր գերազոյն արտայատութիւնների մէջ կը պահպանի իր ներկայ բնաւորութիւնից այն՝ ինչ որ մաքուր է և քաղցր միաժամանակ:

„Русская Мысль“-ի յոնուարի համարում ալուած է մի հնտաքրքիր յօդուած «Գիւղական դասակարգի կազմը» վերնագրով:

Եթէ ընթերցողը հետեւ է փերջի տարիներում ուսուց գրականութեան, անշուշտ նկատած կը լինի, թէ ինչ

ահագին քանակութեամբ հետազօտութիւններ են նուիրուած զիւղացիական հարցը (քրեստյանէ առօքը) ուսումնասիրութեան: Եյս հարցը շատ բարդ է և բաժանուամ է շատ ուրիշ ամելի մանր հարցերի: Ուսումնասիրուամ են գիւղացու անհասական, բարուական, կրօնական, աղքարարկան առանձնայտակութիւնները և այլն, բայց զիւղացու հարցերը, թէ ինչ է զիւղացին և թէ ինչ փոփոխութիւնների է ենթարկուած այս դասակարգի կազմը, շատ քիչ են շօշափուած: Մինչդեռ այս հարցերը պէտք է համարել ամենազըմարդկան պրակտիկաները:

Ծնա այս պահասութիւնն է, որ ցանկացել է լացնել պ. Սերգէյ Տոլստոյը վերոյիշեալ յօդուածով:

Երբապայի ոչ մի երբում չկայ այնպիսի անապին առաքերութիւն զիւղացու և ուրիշ զասակարգերին պատկանող անձանց մէջ, ինչպէս Ռուսաստանում: Այսաեղ զիւղացի կարգում են մի առանձին դասակարգ իրանց յատուկ օրէնքներով, զասարաններով և զիւղական գարշական կարգերով: Միմիւայն սրանց նկատմամբ են զգը ածում խայտառակ մարմնական պատիճները:

Բայց զիւղացիական դասակարգը մի կաստու չէ, որի կազմը չի փոփոխուամ, այլ մի երերուն մարմնն է, որի մէջ մտնում են և որից հնուանում են զանական անհանուր:

Ցեսնենք ուգեմն, թէ ինչ է զիւղական դասակարգը և ինչպէս է փոփոխուամ նրա կազմը:

Առաջի հարցին պատասխանում է «Օրէնքների հաւաքածոււ-ի 1X հատուրը 671 յօդուածը, որից երևում է, որ զիւղացու ծագումը շատ զանազան է և որ տալ մի որևէ որոշում, թէ ինչ է զիւղացին, շատ գժուար է: Մի բան, որ ընդհանուր է այս բոլորի համար, այն է, որ սրանք ամենքը ենթարկուած են իրանց յատուկ օրէնքներին:

Երկրորդ հարցին, այսինքն թէ ինչպէս է փոփոխուած զիւղացիան դասակարգի կազմը, պատասխանելու հա-

մար պ. Ցոլստօյ ուստաց օրէնքներից բերում է այն յօդուածները, որոնք թոյլ են տալիս զրուել կամ զուրս զրուել գիւղացիութիւնից:

Նախ գիւղացի են այն երեխաները, որոնք ծննամ են գիւղացի հօրից: Երկրորդ՝ գիւղացի են կարող զրուել իրանց կամքով տարբ տուսդ կաստկարգերից: Երրորդ՝ մի քանի գէպքում պարտաւոր են գիւղացի զրուել օրէնքով արսուածները և իրաւունքներից զրկուածները (չպահենական պարտաւոր ու զրուել գիւղացի զրուել օրէնքով արսուածները և իրաւունքներից զրկուածները):

Իրանց կամքով զրուազներ շատ քիչ են պատահած, որովհետեւ նրանք հոգ չեն ստանում: Քիչ են նոյնպէս և պարտաւորուած զրուազներ: Յամենայն գէպտ զրուացից գիւղական զառկարգը միայն վիճակից լինած է:

Միւս կողմից շատ սմենկ է հակառակ հստանքը: Սմեն տարի գիւղացիական զառկարգից զուրս են զալիս ահազին թւով մարդիկ, և այն էլ ամենաընտիր մասը:

Ամեն մի գիւղացի յայտնի պայմաններում կարող է, նոյնիսկ պարտաւոր է զուրս զրուել գիւղից:

Կարող են զուրս զրուել այն գիւղացիները, որոնք հարստանալով կը սկսեն պարապուել վաճառականութեամբ, միջնակարգ կամ բարձրագոյն զարոց աւարտազները, հոգևորական զառնողները, աէրուական ծառայութեան մտնողները և վերջապէս զառապարտածները, որոնք զրկուած են բոլոր իրաւունքներից (Ըստ լափենիմ ամենաքաղաքացիութիւն պահանջանակ է պարտաւոր ու զրուել գիւղացի զրուել օրէնքով արսուածները):

Այս բոլորից յետոյ պարզ է, թէ ով է մտնում գիւղացի: Այն բոլոր անձինք, որոնք փոքրիշատէ բարձրանում են

ընդհանուր մակերևոյթից թէ իրանց ուսումով, թէ փողով, կարող են, նոյնիսկ մի քանի գէպքերում պարտաւոր են թողնել գիւղացիական զառկարգը. գիւղում մնում են միայն նրանք, որոնք ոչ ուսում ունեն, ոչ փող, ոչ առանձին ընդունակութիւն ևայլն: Միթէ զարմանալի պէտք է լինի, որ գիւղացին տղէտ, աղքատ է, չի տաշագիմում, ձեռնարկող չէ, անկարող է արտայայտել իր կարիքները ևայլն:

Միւնոյնն է, ասում է պ. յօդուածագիրը, զարմանալ, որ կաթը իւղալի չէ, երբ բաշած է նրա երեսը, սկըը:

„Էկոնոմիկալ Գազետ“-ի № 5-ում պ. Վ. Ցոտոմենան բերում է կեանքի համեմատական արժէքը մի քանի կը կը նրանքը: Այդ համեմատական թմբից երեւում է, որ կեանքը տմենաթանգաղին է Փրանսիայում: Խուսատանի մեծ քաղաքներում կեանքը շատ բշով է տելի չժաման:

Իսկ մի քանի բաների համար մենք վճարում ենք սարսափելի զներ: Օրինակ, թէյի համար զերմանացու հետ համեմատած 304% տել. ծխախոտի՝ 687%: Թղթի՝ 690%: ածուխի՝ 200%: գիւղատնտ. մեքենաների՝ 159%: Ինչ վերաբերում է մետաղից շնուռած բաներին, ամերիկացին՝ օրին՝ մի փութմեխին տալիս է 1 ր. 50 կուպ. իսկ ուսուր միայն մաքս է տալիս 3 ր. 20 կոպ., իսկ մեխի փութին 4-ից 8 ր. Մի զր. ամենավատ թէյր մեզ մօտ արժէ 1 ր. 40 կ., իսկ Լոնդոնում 31 կ.: Նաւթի փութը Պնտերը ուրգում արժէ 1 ր. 30 կոպ., Լոնդոնում 83 կոպ.:

Այս թանգութեան գլխաւոր պատճառն է հովտնաւորական մաքսերը: